# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Ալվինա Էլոյան. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության միջազգային համագործակցության և սփյուռքի հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ, ք. Իսի լը Մուլինո, ք. Պլեսի Ռոբինսոն), 2026 թ. Մարտի 27-31

3. **Հրավիրող կողմը.**

Ֆրանս-Հայկական առևտրի և արդյունաբերության պալատի ներդրումների և հայ-ֆրանսիական հարաբերությունների ղեկավար Հայկ Օլիվյե Շահբազյան

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցել Ֆրանսիայի հայկական համայնքի կազմակերպած մարզական, մշակութային միջոցառումներին՝ ներկայացնելու ՀՀ ԿԳՄՍ նախարարության մարզամշակութային աջակցության ծրագրերը, խթանելու նախարարության և սփյուռքի կրթական, մշակութային և սպորտային հաստատությունների համագործակցությունը, ինչպես նաև պարգևատրել «Գույների կամուրջ. Հայաստան – Ֆրանսիա» խորագիրը կրող ցուցահանդեսի մասնակից երեխաների լավագույն ճանաչված աշխատանքները:

5. **Քննարկված թեմաները.**

- Հայաստան–Սփյուռք կապերի ամրապնդում և զարգացման ուղիներ
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սփյուռքի համար իրականացվող կրթական, մշակութային և սպորտային ծրագրերի ներկայացում
- Սփյուռքի կրթական հաստատությունների կարիքների վերհանում և աջակցման հնարավորություններ
- Ֆրանսիայում հայագիտական կենտրոնի ստեղծման հնարավորությունը
- Սփյուռքի դպրոցների համար դասագրքերի և մեթոդական նյութերի ապահովման անհրաժեշտությունը
- Հայկական մեկօրյա դպրոցների զարգացման և կրթական ծրագրերի արդիականացման հարցերը
- Հայաստան–Ֆրանսիա կրթական և մշակութային համագործակցության ընդլայնում

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Մասնակցություն «Գույների կամուրջ. Հայաստան–Ֆրանսիա» ցուցահանդեսին և պարգևատրման արարողությանը
- Ելույթ «Արարատ» ֆուտբոլային ակումբի 50-ամյակին նվիրված միջոցառման շրջանակում

- Համայնքային հանդիպումներ՝ Ֆրանսիայի հայկական համայնքի ներկայացուցիչների և ՀՀ հանձնակատարների հետ
- Քննարկումներ սփյուռքում կրթության կազմակերպման, դպրոցների զարգացման և երիտասարդների ներգրավման վերաբերյալ
- Այցելություն Փարիզի «JAF» կենտրոն, ծանոթացում կրթական ծրագրերին և արևմտահայերենի ուսուցման գործընթացին
- Հանդիպում Պլեսի Ռոբինսոնի քաղաքապետի հետ՝ երկկողմ համագործակցության զարգացման հարցերով
- Հանդիպում Ֆրանս-հայկական համագործակցությունների համակարգողի հետ՝ համագործակցության հեռանկարների քննարկմամբ

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ՝

Հայաստանի և Ֆրանսիայի կրթական հաստատությունների միջև համագործակցության ընդլայնման ուղղությամբ

Քույր դպրոցների և քույր ակումբների ձևավորման հնարավորությունների ուսումնասիրման վերաբերյալ

Պայմանավորվածություն՝ ներկայացված արևմտահայերենի դասագիրքը ուղարկել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով

Քննարկվել և նախնական համաձայնություն է ձևավորվել՝ համատեղ ծրագրերի իրականացման շուրջ

Ստորագրված փաստաթղթեր չեն եղել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հայագիտական կենտրոնի ստեղծում Ֆրանսիայում

Եղանակ՝ համագործակցություն համայնքային կառույցների և ՀՀ ԿԳՄՍ նախարարության միջև

Պատասխանատու՝ ՀՀ ԿԳՄՍՆ և համայնքային կառույցներ

Ակնկալվող արդյունք՝ հայապահպանության ամրապնդում

Քույր դպրոցների և ակումբների ձևավորում

Եղանակ՝ համապատասխան հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատում

Ժամկետ՝ 1 տարվա ընթացքում

Ակնկալվող արդյունք՝ փորձի փոխանակում, կրթության որակի բարձրացում

Սփյուռքի դպրոցներին դասագրքերի և մեթոդական նյութերի տրամադրում

Եղանակ՝ կարիքների գնահատում և փուլային տրամադրում

Ժամկետ՝ կարճաժամկետ

Ակնկալվող արդյունք՝ կրթության արդյունավետության բարձրացում

Մեկօրյա դպրոցների զարգացում և ծրագրերի արդիականացում

Եղանակ՝ նոր չափորոշիչներին համապատասխանեցում, ուսուցիչների վերապատրաստում

Ակնկալվող արդյունք՝ կրթության որակի բարձրացում և ներգրավվածության աճ

Հայաստանի Հանրապետության օրերի անցկացում Ֆրանսիայում (2027թ.)

Եղանակ՝ միջգերատեսչական և համայնքային համագործակցություն

Ժամկետ՝ 2027թ.

Ակնկալվող արդյունք՝ հայ-ֆրանսիական կապերի խորացում

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

**02.04.2026**